

Patterson

Հոկտեմբեր 17, 1951

Մեծայարդ
Պրն. Միջան Նուրիկեան
Փեթըրսըն, Ն.Ճ.

Սիրելի Պրն. Նուրիկեան,

Ասկէ ժամանակ մ'առաջ գրուած նամակով մը Փեթըրսընի
մեր եկեղեցւոյն հովիւր, Տ.Արտէն ՔՀՆՅ. Աշճեան կը զանգատէր որ
հոգարարձութեան ժողովներուն մէջ Զեր Հանգամանքին կրօնական նկարագրին
վայել վարմունք մը չեք ցուցնեք:

Թիշեալ զանգատագիրը Կեդր. Վարչութեան մէջ նկատի
առինք եւ հետեւաբար այսու կը յորդորենք զանգ սիրով՝ որ թէ Զեր
հովիւրն եւ թէ ընդհանրապէս ժողովին անդամոց վերաբերմամբ բարեկիրթ
եւ բարեկարգ վերաբերմունք մ'ունենաք, եկեղեցւոյ Համար կատարուած
աշխատանքին նուրիրական նկարագրին լի դիտակցութեամբ, եւ հետամուտ
ըլլալով որ եկեղեցւոյ Համար կատարուած գործերը յառաջ տարուին Հա-
մերաշխութեամբ, սիրով եւ փոխադարձ հասկացողութեամբ եւ յարգանքով։

Հայրական սիրոյ ողջունի
Մնամք աղօթարաբ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ԱՐԲՈՅՆԵՒՐՈՒԹՅԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻԱՑ ԵԿԵՂԵՑ

Փետրվար, 1. մ.

Կողմանը՝
1951 թ.

11 դեկտեմբեր
1951

Գերագույն
Տէ՛ր Տիրան Կապիսկոպոս Ներքոցեան
Առաջ Նոր Ամերիկանական
Նիւ Եռոք

St. John's Armenian Church

135 BLOOMFIELD AVENUE

PATERSON, N. J.

ԱՐՑԵՆ ՔՆՅՑ ԱՇԽԵԱՆ, Հովհան

REV. ARTEM ASHJIAN, Rector

Res: 135 Bloomfield Avenue

PATERSON, N. J.

Tel. ARMORY 4-0178

10 ՅՈՒԼԻ 1951

Գերագույն Արքազան Հայր,

Այս նամակը գանգատ մըն է Սրբոց Դեւանգեանի
Վկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենադպիր Տիար Միհրան Նուրիկեանի
վերաբերմամբ:

Տիար Միհրան Նուրիկեան անախորժ ելոյթ մ'ունեցաւ
անդստին այն առաջին ժողովին մէջ զոր ունեցայ Հոգաբարձութեան
հետ, իբրեւ նոր Հովհան այս ծուխին, առկէ երեք ամիս առաջ:

Հակառակ այդ առթիւ իրեն ուղղուած զիտողութեան,
իմ եւ Հոգաբարձուներու կողմէ, Տիար Միհրան Նուրիկեան Հետզետէ
կը զարգացնէ իր բացասական դերն ու ազգեցութիւնը Հովհուական
գործունչութեանս վերաբերմամբ, ոչ Միայն ժաղավներու քանագին,
այլ նաեւ ծուխին մէջ առանաբակէ:

Ժողովներու ընթացքին կ'ունենայ բուռն եւ կրօնու
արտայայտութիւններ: Դժգոհ երբ դիտողութիւն կ'ուղղուի իրեն,
ոտքի կ'ելլէ ու ժողովէն մեկնելու խոռվայոյզ շարժումներ կ'ոնէ:
Հովհան հանդէպ անպատճառ եւ արհամարհական արտայայտութիւններէ
զատ, եւս առաւել կը զործածէ ստորացուցիչ որակումներ, եւ կը
կուտէ օրակարգին հետ կապ չունեցող ամրանականի ննեռ:

Մայակական առաջարկ ինքնահաւաքառ ու գործադրութեան առաջարկ
տայայտութիւններուն, որոնք կրնան բացատրել իր սեփականատէրի
մտայնութիւնը հանդէպ եկեղեցւոյն, անոր պաշտօնեաններուն ու
ծխական բոլոր ձեռնարկներուն:

Հոգաբարձութեան անդամները, ընդունելով հանդերձ
թէ Տիար Նուրիկեանի այս ոչ շինարար ընթացքը շեշտուած ու
հիւանդագին աստիճանի մը հասած է վեց եօթ ամիսներէ ի վեր, միօրին
սակ դիրք մը չեն որդեգրեր իր ելոյթներուն հանդէպ: Ատենապետը
կը փորձէ զայն ողոքել, անոր եսանիութեան յազուրք տալու բնոյթ
ունեցող արտայայտութիւններով, երբեմն նոյնիսկ ի հետուկս ժո-
ղովի նախագահին: Մի քանին յայտնի կերպով կը զժգոհին ու կը
ցաւին, իսկ ոմանք ալ լաւագոյն կը համարեն լոնի:

Այս գանգատագրին, սօրազան Հայր, առիթ տուած մէջ քշապէ
երէկ իրիկուան Հոգաբարձական ժողովը, որու մանրամասնութիւններուն
մէջ շեմ փափաքիր մտնել այստեղ:

Այսու կը խնդրեմ ձեր Սրբազնութենէն, որ հաճիթ տուրի
նութիւն մ'ընել այս մասին: ԽՄ կազմիքով լուազոյն լուծումը պիտի
լինէր Տիար Միհրան Նուրիկեանը դադրեցնէլ Հոգաբարձութեան մէջ զի-
ծելէ: Այդ անկարեւէ լինելու պարագային, կը խնդրեմ որ համե-
նկատի ունենայ իմ պաշտօնս փոխինութեան ենթարկելու մօսալու
սիրառականութիւնը:

Համար Արքազան Հայր, առաջարկ առաջարկ առաջարկ առաջարկ

ՄՐԲՈՑ ՂԵՒՇՈՂԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ՓԵԹԸՐ 1951, Ն. Ճ.



St. Leon's Armenian Church

135 BLOOMFIELD AVENUE

PATERSON, N. J.

ԽՄՏ. ԿԱՐԱՎԱՐ ԱՇԺԵԱՆ, Հովհան

REV. ARTEM ASHJIAN, Rector

Res: 136 Bloomfield Avenue

Paterson, N. J.

Tel. ARmory 4-0178

10 ՅՈՒԼԻՍ 1951

ԳԵ ՐԱՊԱՄԻ ւ
Տէ ը Տի րան Եպիսկոպոս Ներսոյեան
Առաջնորդ Ամերիկահայոց
Նիւ Եղբք

ԳԵ ՐԱՊԱՄԻ ՍՐԲԱԳԱՆ Հայր,

Այս նամակը գանգատ մըն է Սրբոց Ղեւոնդեանց
Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենադպի Տիար Սիհրան Նուրիկեանի
Վերաբերմամբ:

Տիար Սիհրան Նուրիկեան անախորժ Ելոյթ մզունեցաւ
անդստին այն առաջին ժողովին մէջ զոր ունեցայ Հոգաբարձութեան
ճետ, իբրեւ նոր Հովիւ այս ծուխին, ասկէ երեք ամիս առաջ:
Հակառակ այդ առթիւ իրեն ուղղուած դիտողութեան,
իմ եւ Հոգաբարձուներու կողմէ, Տիար Սիհրան Նուրիկեան հետզճետէ
կը զարգացնէ իր բացասական դերն ու ազդեցութիւնը Հովուական
գործունէութեանս վերաբերմամբ, ոչ միայն ժողովներու ընթացքին,
այլ նաև ծուխին մէջ առհասարակ:

Ժողովներու ընթացքին կ'ունեայ բուռն եւ կրքոտ
արտայայտութիւններ: Դժգոհ երբ դիտողութիւն կ'ուղղուի իրեն,
ոտքի կ'ել լէ ու ժողովէն մեկնելու խովայոյզ շարժումներ կ'ընէ:
Հովիւն հանդէպ անպատկառ եւ արհամարհական արտայայտութիւններ
զատ, եւս առաւել կը գործածէ ստորացուցիչ որակումներ, եւ կը
կուտէ օրակարգին հետ կապ չունեցող ամբաստանութիւններ:

Խօսքը չեմ ըներ իր ինքնահաւան ու պարձենկոտ ար-
տայայտութիւններուն, որոնք կրնան բացատրել իր սեփականատէ ըի
մտայնութիւնը հանդէպ եկեղեցւոյն, անոր պաշտօնեաներուն ու
ծխական բոլոր ձեռնարկներուն:

Հոգաբարձութեան անդամները, ընդունելով հանդեռձ
թէ Տիար Նուրիկեանի այս ոչ շինարար ընթացքը շեշտուած ու
հիւանդագին աստիճանի մը հասած է վեց եօթ ամիսներէ ի վեր, միօրի-
նակ դիրք մը չեն որդեգրեր իր Ելոյթներուն հանդէպ: Ասենապետը
կը փորձէ զայն ողոքել, անոր Եսասիրութեան յագուրդ տալու բնոյթ
ունեցող արտայայտութիւններով, երբեմն նոյնիսկ ի հեճուկս ժո-
ղովի նախագահին: Սի քանիներ յայտնի կերպով կը դժգոհին ու կը
ցաւին, իսկ ոմանք ալ լաւագոյն կը համարեն լոել:

Այս գանգատագրին, սրբագան հայր, առիթ տուաւ վերջապէս
երէկ իրիկուան Հոգաբարձական ժողովը, որու մանրամասնութիւններուն
մէջ չեմ փափաքիր մտնել այստեղ:

Այսու կը խնդրեմ ձեր Սրբազնութենէն, որ հաճիք տնօրի-
նութիւն մը նել այս մասին: Իմ կարծիքով լաւագոյն լուծումը պիտի
լինէր Տիար Սիհրան Նուրիկեանը դադրեցնել Հոգաբարձութեան մէջ գոր-
ծելէ: Այդ անկարելի լինելու պարագային, կը խնդրեմ որ հաճիք
նկատի ունենալ իմ պաշտօնս փոփոխութեան ենթարկելու մօտալու
ստիպողականութիւնը:

Թիմ Պողոսիս յաջման, 1-օշտակ հայոց պատրիարք Աջո

ՍՐԲՈՅ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ՓԵԹԸՐՄԸՆ, Ն. Ճ.



St. Leon's Armenian Church

135 BLOOMFIELD AVENUE

PATERSON, N. J.

ԱՐՏԵՆ ՔՀՆՅ. ԱՇՋԱՆ, Հովհան

REV. ARTEM ASHJIAN, Rector

Res: 136 Bloomfield Avenue

Paterson, N. J.

Tel. ARMORY 4-0178

5 Սեպտեմբեր 1951

ԳԵ ՐԱՊԱՏԻ ւ
Տէ Ր Տի րան Եպիսկոպոս Ներսոյեան
Առաջնորդ Ամերիկահայոց
Նիւ Եռք, Ն. Ե.

ԳԵ ՐԱՊԱՏԻ ւ Սրբազն Հայր,

Սօտ երկու ամիս անցած է Յուլիս 10-ին ի վեր, երբ
Զեր Սրբազնութեան ուղղեցի գանգատագիր մը, Եկեղեցւոյս Հոգաբար-
ձութեան առենազիր Տիար Միհրան Նուրիկեանի վերաբերմամբ:

Ըստ երեւոյթին, զարդ ոեւէ քայլ չէ առնուած ձեր
կողմէ այս անհատի խափանարար ընթացքը չէ զոքացնելու տեսակէտէն,
որովհետեւ Տիար Նուրիկեան կը շարունակէ այն բոլորը որոնց
անդրադարձած էի Յուլիս 10-ի գրութեամբս:

Աւելին: Մի քանի օր առաջ Տիար Նուրիկեան, ըստ իր
ըսածին, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներէն մէկուն
պատահմամբ հանդիպելով, կը տեսնէ օրակարգը այս ամսուածն Կեդր.
Վարչութեան գումարելիք ժողովին, եւ կը նշմարէ գլուխ մը, Տ.ԱՐ-
Տէն ՔԱՀԱՆԱՅԻ ԳԱՆԳԱՏԱԳԻՐԸ Փիթրը Ս.ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ Միկ ԱՆԴԱՄԻՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ: Տիար Նուրիկեան այդ
առթիւ կը ստուգէ նաեւ խնդրոյ առարկայ անձին ինքնութիւնը, եւ,
հետեւաբար, համաձայն իր ունակութեան, երէկ մեր Հոգաբարձական
ժողովին իբրեւ վերջաբան, կրքոտ եղանակաւ ինդիր յարոյց թէ
Հովիւը ի նշ իրաւունքով այդ կարգի գանգատագիր կ'զւղղէ Ազգային
Կեդրոնական Վարչութեան, եւ պահանջեց զիտնալ թէ ի նշ է գանգատա-
գիրիս բովանդակութիւնը:

Աւելորդ է յայտնել թէ գանգատագրիս բովանդակութեան
մասին ոեւէ բան Հաղորդել Մերժեցի, եւ ուրախ եմ ըսել թէ Հոգա-
բարձութեան ժողովին ներկայ անդամներէն գիտակից եւ հետաքրքրուող
անձերը դիտել տուին Տիար Նուրիկեանին իր պահանջին անարդար եւ
անիմաստ ըլլալը:

Սրբազն Հայր, անտեղի է իմ կողմէ զատում մը Կեդր.
Վարչութեան այդ ինձ անծանօթ անհատի գաղտնապահնութեան սկզբունքին
հաւատարիմ մնալու աստիճանին մասին: Սակայն ինչ կը վերաբերի իմ
գործիս, զարձեալ կը կրկնեմ նախորդ զրութեանս եղանացութիւնը,
յիշեցնելով Զեր Սրբազնութեան թէ նախկին եռամեայ պաշտօնիս մէջ
դժգոհանք գոյութիւն չունէր ոչ իմ կողմէս, ոչ ալ Եկեղեցւոյ պաշ-
տօնական մարմիններուն եւ անհատներուն կողմէ առ իս: Ընդ հակառակն:

Սալամելով ձեր իմաստուն տնօրինութեան
մնամ որդիական յարգանօք, աշխամբուրիւ
Արքայի թիւ. Հայութիւն



PARISH COUNCIL OF ST. LEONCE ARMENIAN
CHURCH OF PATERSON, N. J.

135-51 BLOOMFIELD AVENUE

ՀՈԴԱՔԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄՐԲՈՑ ՂԵԽՈՇԻԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՓԵԹԸՐԱԾՆԻ

Բարձրապատիւ,
Տ.Մամբրէ Արքեպիսկոպոս Գալֆայեան,
Բարեջան Առաջնորդ Հայոց Ամերիկայի.
Նիւ-Նորք:

18, Փետր. 1955

Փեթըրոսը.

Բարձ. Սրբազն Հայր,

Ենորհակալութեամբ ստացած ենք Ձեր թիւ 9 Երջարերականը։
Այսու ուրախութեամբ կը տեղեկացնենք Ձէ Ձեր Հրահանգաց
Համաձայն մեր նոր սերունդի պատուական երիտասարդներն ու երիտասար-
դուհիները բոլորուած են Եկեղեցւոյս շուրջ եւ անոր պայծառութեան
Համար կը սատարեն մեզի իրենց կարելի միջոցներով։

Մեր սիրեցեալ զաւակաց պատշաճ ցուցմունք տալն ու երենց
պաշտպան կանգնիլը իրենց այս Աստուածահանոյ գործին մէջ կը նկատենք
մեր աւագ պարտականութիւններէն մին։

Զանազիր պիտի լինինք Ձեր Հրահանգաց անթերի գործադրման
առ այս։

Մնամ որդիական յարգանօք յւ մատչելով ի Համբոյր

Հյր Ս.Աջոյն

Ի դիմաց Փեթըրոսընի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ Հոգաբարձութեան։

Հայոց Փեթ. Տ. Ամազալից
Ապրդան ՔՀՆ. Տ. Աստուածահան

Հոկիւ



PARISH COUNCIL OF ST. LEONCE ARMENIAN
CHURCH OF PATERSON, N. J.

135-51 BLOOMFIELD AVENUE

ՀՈԳԱՌԱՐՁՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄՐԲՈՑ ԴԵՒՌՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՓԵԹԸՐԸԸՆԻ

Բարձրապատիւ,
Տ. Մամբրէ Արքեպիսկոպոս Գալֆայեան,
Բարեջան Առաջնորդ Հայոց Ամերիկայի。
Նիւ-Շորը

18, Փետր. 1955

Փեթըրոսը.

Բարձրապատիւ Հայոց,

Զեր թիւ 6 Շրջաբերականով հաղորդած էիք թեմական
Պատգամաւորական ժողովին որոշումը անդամատուրքի սակի մասին։

Ժամանակէ մը իվեր Եկեղեցւոյս անդամատուրքի համար
կը գործածենք պահարանի զրութիւնը։

Գոհունակութեամբ կը հաղորդենք թէ մեր կիրարկած այս
ձեւը մատնանշուած սակէն աւելի եկամուտ կը բերէ Եկեղեցւոյս։

Ուստի, մտադիր ենք ներկայ դրութիւնը շարունակել յա-
ռաջիկային եւս, եթէ թոյլատու լինիք մեզի։

Մնամ որդիական ակնածանօթ, եւ մատչելով ի համբոյր։

Զեր Ս. Աջոյն

Ի դիմաց Փեթըրոսընի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ Հոգաբարձութեան է

James Playt. Armenian
Հարդան ՔՀՆ. Տ. Ասատուրեան։

Հովիւ

Թիւ 1992
Մարտ 20, 1961

Արժանացնորս
Տ. Գառնիկ ՔԸՆյ. Հալլանեան
Հոգեւոր Հայրէ և Խախազան Սխական Խորհուրդի
Արքոց Ղետնականց Եկեղեցւոյ
Փեթրուսն.

Արքելի Տեր Հայր,

Առաջած ենք Ցունուար 5 թուակիր Զեր Խամակը, որով արտօնութիւն կը ինչըրէիր Համայնքիդ կողմէ Ֆերլոն ազգաբին մէջ գնուած Հողամասին Վրայ կրօնական և Մշակութային կեդրոնի մը շինութեան։

Այսու կը յայտնենք թէ Թեմական Խորհուրդը, 1961, Մարտ 17ի իր լիազումար նիստին մէջ, նկատի առա Զեր ոոյն պաշտօնագիրը և որոշեց արտօնել, որպէս զի Փեթրուսնի մը Համայնքը ընթաց տայ Ֆերլոնի Հողամասին Վրայ շինարարական իր ծրագիրներուն։

Հազորգելով զայս Զեզի և պատուարժան Սխական Խորհուրդիդ, կը մաղթենք կառարձալ յաշազութիւն Զեր շինարարական աշխատանքներուն։

Մնամք Ֆիրաւանց սիրոյ ոզիւնիք
Ազօթարար

ՄԻԱՆ ԱՐԵՍՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

**PARISH COUNCIL OF ST. LEON'S ARMENIAN
CHURCH OF PATERSON, N. J.**



135-51 BLOOMFIELD AVENUE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՂԵԽՈՎԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓԵՄԸՐԱԾՆԻ

*ԲԺՇ Խոջիկից
Ալբերտ*

ՅՈՒՆՈՒԱՐ 5 - 1961

Գերաշնորհ
Տ, Սիռն Արքեպիսկոպոս Սանուկեան
Առաջնորդ Ամերիկահայոց եւ¹
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Նորք:

Սրբազն Հայր,

Տեղեակ է Զեր Սրբազնութիւնը, ինչպէս նաև Թեմական Խորհուրդին
կազմը, որ Ս, Ղեւոնդեանց եկեղեցւոյ բարեպաշտ ժողովուրդը, մօտ երեք
տարի շարունակ գրաւոր եւ բերանացի դիմումներ կատարած է՝ ստանալու
համար Թեմական Խորհուրդի բարեհան արտօնութիւնը, որպէսզի կարելի
ըլլայ ձեռնարկել շինութեան գործին մէրլոն քաղաքին մէջ գնուած նոր
հողին վրայ, շրջանին հայութեան մշակութային եւ կրօնական հեանգին
արթնութեան համար:

Վերջին նամակը որ Ծխական Խորհուրդս գրած էր Զեր միջոցաւ
Թեմական Խորհուրդին՝ յայտնելու համար եկեղեցւոյս 1960-ի տարեկան ան-
դամական ժողովի որոշումը՝ նոր շինութեան առնջութեամբ, ցարդ մնացած է
անպատճիսանի:

Ներկայ նամակով կուգանք անգամ մը եւս յայտնելու Զեր Սրբազ-
նութեան եւ Թեմական Խորհուրդի կազմին՝ 1960 Դեկտեմբերի Տարեկան Անդա-
մական ժողովին կողմէ առնուած որոշումը՝ թէ Ս, Ղեւոնդեանց եկեղեցւոյ
անգամները անգամ մը եւս որոշած են 1961-ի տարեշրջանին անպայման
ձեռնարկել շինութեան գործին մէրլոնի հողին վրայ:

Կը յուսանք որ այս նամակը պիտի ըլլայ վերջինը մեր կողմէ
եղած շարք մը դիմումներուն, եւ լիսայոյս ենք որ շուտափոյթ դրական
պատասխան մը կարելի պիտի ըլլայ ստանալ Զերդ Սրբազնութենէն:

Որդիական Սիրով եւ ակնածանօթ
Մատչիմք Զերդ Ս, Աջոյն

Ի Դիմաց Ծխական Խորհուրդի
Քառորդից. Խոչըստոց
Պանիկ Բահանայ Հալլահեան
Հովիւ եւ Նախագահ

*Հրանդ Եղիաչյան
Հրանդ Եղիաչյան*
Հրանդ Եղիաչյան, Ատենադպիր

*Եղիաչյան Դավիթ
Եղիաչյան*
Եղիաչյան Նախագահ

ԺԼԱԿԱՆ ԽՈՐՀՈՂԻՐԴ
Ս. ՊԱՏՈՒԱԺԱԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

*P.S. Խորհրդական
Առաջնային Խորհրդական*



Յ. 16. 1961

THE PARISH COUNCIL

St. Mary's Armenian Church

417 14th AVENUE

IRVINGTON, N. J.

ESSEX 3-2329

Նոյեմբ. 8 - 1960

ԳԵՐՉՈՒ.

Տէր Սիոն Սրբզ. Արքնպիսկ. Սանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Եւ Նախագահ Թեմական Խորհրդոյ.
Նիւ Եղբ.

Սրբազան Հայր.

Թուականէս մօտաւորապէս երեք տարի առաջ Թեմիս Կանոնադրու-
թեան Համաձայն, Նիւարքի Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ կալուածաթու-
թերը - Տիտ- Փոխանցած էինք Առաջնորդարանիդ.։ Այս փոխանցումին պատճառաւ,
Նիւ Ճըրգի Նահանգի օրենքներուն Համաձայն, Ըստիպուած էինք տարեկան որոշ
գումար մը որպէս տուրք վճարել կառավարութեան, որով հետեւ կալուածաթու-
թերը Նահանգէս դուրս ելլելով Նիւ Եղբ Նահանգին փոխանցուած էին։ Այս
պատճառաւ ստիպուեցանք մեր կալուածաթութերը ետ առնել Առաջնորդարանէդ,
որպէս զի Նահանգային Տարեկան տուրք չվճարենք։

Առաջնորդարանիդ թելադրութեան վրայ Պրն. Վինսընթ Եարտըմ
եւ Պրն. Բիթըր Տաղլեան սկսան զբաղիլ Նիւ Ճըրգի Եկեղեցապատկան կալուա-
ծաթութերով. ցարդ ունեէ կարգադրութիւն չէ եղած վերջնականապէս յայտնի
ըլլալու թէ ինչ պիտի ըլլայ մեր կալուածաթութերուն Առաջնորդարանիդ փո-
խանցելու հարցը։ Մեր Համեստ թելադրութիւնն է որ Առաջնորդարանդ Կալուա-
ծոց Աւանդապահ Մարմին մը նշանակէնիւ Ճըրգի բոլոր Եկեղեցիներուն Համար
եւ կալուածաթութերը անոնց փոխանցուին։

Վստահ ենք որ այս անգամ Զերդ Սրբազնութիւնը եւ Թեմիս Կեր-
ոնական Վարչութիւնը լուրջ ուշադրութեան առարկայ պիտի ընեն կալուածա-
թութերու փոխանցման այս կարեւոր խնդիրը։ Հակառակ պարագային մեր յարմար
դասած ձեւով պիտի կարգադրենք այս խնդիրը։

Զայս Հաղորդելով առ Զեզ. ի դիմաց Ս. Աստուածածին Հայց.
Եկեղեցւոյ Կալուածոց Աւանդապահ Մարմնոյն։

Մատչիմք Զեր Ս. Աջոյն

Խոնարհաբար
Y. J. S. D. A.

Կ. Թարճեան
Ասենապետ

Խ. Պարմագեան

Ասենապիր

Խ. Պարմագեան



**PARISH COUNCIL OF ST. LEON'S ARMENIAN
CHURCH OF PATERSON, N. J.**

135-51 BLOOMFIELD AVENUE

ՀՈՎԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԱՌԱԲԵԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՂԵԽՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓԵԹԸՐԱԾՆԻ

*Prof. Hrachiaoffe
Abuelhajt -*

Մարտ 9 - 1960

Գերաշնորհ
Տ, Սիոն Առքեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ^ւ
Նախագահ Հեմական Խորհուրդի
նիւ նորք :

Սրբազն Հայր,

Սոյն Նամակով Կուգանք Զերդ Սրբազնութեան հազորդել։
Թէ 1960-ի Տարեկան Ծխական Անդամական ժողովին, եկեղեցւոյս
անդամները Կենսական գտնելով սրահի մը անմիջական պէտքն ու
անհրաժեշտութիւնը, միաձայնութեամբ որոշեցին սրահի շինութեան
Ճեռնարկել Ֆերլոնի հողին Վրայ։

Ծխական Խորհուրդս ընդառաջելով անդամներուն փափաքին,
արդէն իսկ սկսած է ծրագիրներու պատրաստութեանց, որպէսզի կարե-
լի ըլլայ յաջողցնել եւ իրականացնել սրահին անմիջական շինու-
թիւնը, որը այնքան կարեւոր է ու Կենսական Ս, Ղեւոնդեանց Եկե-
ղեցւոյ բարգաւաճման համար։

Լիայոյս ենք որ, Զերդ Սրբազնութեան օրհնութիւնն ու
Թեմական Խորհուրդի բարեհաճ արտօնութիւնը շուտափոյթ Կ'ստանանք
ու Կ'սկսինք մեր ծրագրին իրագործման, ի պայծառութիւն Հայաս-
տանեայց Եկեղեցւոյ եւ ի մնիթարութիւն մեր հավատացեալ ժողովը-
եան։

Սատչելով ի համբոյր Զերդ Ս, Աշոյն

Ի դիմաց Ծխական Խորհուրդին

John Nakashian

Ատենապետ
ճան Նագաշեան

Եւլուսել պր. Անդրեաս

Նախագահ
Անդրանիկ Սրհ, Հալլաքեան

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՄԷՋ ԵՂԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԵԹԸՐՍԼՆԻ ԵՒ ՊԸՇՆԸՆ ՔԱՐԻՍԴԻ ԾՈՒԽՄՐՈՒՆ
ԾԿԵՂԵՑԱՇԽԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

"Ք.- Փետրուար 19ին Սրբազան Հայրը գտնուած է Փեթըրսընի համայնքը։
Այս ծուխը տարիներէ ի վեր ունեցած իր ծրագիրը գործադրելու
համար՝ Ֆէ յրլոն քաղաքին մէջ գտած է ընդարձակ հող մը, որուն
վրայ կան երեք շէնքեր։ Այս կալուածը կարելի է զնել շատ
նպաստառ գինով։ Սրբազան Հայրը, տեսնելով այդ կալուածը,
գտած է որ շատ նպատակայարմար է, մանաւանդ որ Փեթըրսընի
երիտասարդ տարրը այդ կողմերը բնակութիւն հաստատած է։
կարելի է նոր եկեղեցի մը շինել այդ գետինին վրայ Առաջնորդ
Հայրը իր հաւանութիւնը տուած է այդ ուղղութեամբ Փեթըրսընի
Ծխական Խորհուրդին։"

Մարտ 21, 1958

"Յ.- Ընդհանուր կարծիքներ փոխանակուել է ետք, ժողովս եզրակացուց
թէ Պըրկըն Բառւնդիի ծուխը պէտք է ընթացք տայ եկեղեցւոյ
շինութեան, արդէն գնուած գետինին վրայ։ իսկ Փեթըրսընի ծուխը
չանայ ծախել Ֆէ յրլոնի մէջ գնած կալուածը, եւ մէկ-երկու
տարուան շըշանով նախաձեռնարկ չըլլայ նոր եկեղեցիի մը շինու-
թեան, եւ եթէ անպայման ատիկա ընել Հարկ տեսնեն, այն ժամանակ
թող գնեն գետին մը Փըսէ յր Բառւնդիի յարմար վայրի մը մէջ։
Ուրիշ խօսքով, Պըրկըն Բառւնդիի մէջ պէտք է շինուի թեմին
ենթակայ միայն մէկ եկեղեցի ու ատիկա շինելու է Պըրկըն
Բառւնդիի ծուխը։"

Ապրիլ 18, 1958

"Ք.- Նկատի ունենալով որ, աւելի քան տարիէ Մ' իվեր, Թեմական Խոր-
հուրդի հաւանութեամբ, Պըրկըն Բառւնդիի մէջ նորակազմ Հայ
Առաքելական համայնքը ձեռնարկած է եկեղեցաշինութեան գործին։

Թեմական Խորհուրդս իմաստուն չի համարեր արտօնել որ Առաջնոր-
դարանիս ենթակայ ու ըրիշ համայնք մը նոյն շըշանին մէջ նախա-
ձեռնէ եկեղեցի կամ սրահ շինելու, մինչեւ որ Պըրկըն Բառւնդիի
համայնքին եկեղեցաշինական գործը իրականացման ճամբուն մէջ
մտած չըլլայ։"

Մայիս 21, 1959

Թեմական Խորհուրդի այս ժողովներուն
մէջ, Փեթըրսընի եւ Պըրկըն Բառւնդիի ծուխերուն
ներկայացուցիչները լսելէ ետք, տրուած են
վերեւի որոշումները։"

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՏԵՍԱԳՐՈՒԹԵԱՆ
ՄԷՋ ԵՂԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԵԹԸՐՍԼՆԻ ԵՒ ՊՋՐԿԸՆ ՔԱԼԻՆԴԻԻ ԾՈՒԽԵՐՈՒՆ
ԵԿԵՂԵՑԱՇԽԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՉ

"Ք.- Փետրուար 19ին Սրբազան Հայրը գտնուած է Փէթըրսընի համայնքը։
Այս ծուխը տարիներէ ի վեր ունեցած իր ծրագիրը գործադրելու համար՝ Ֆէյրլոն քաղաքին մէջ գտած է ընդարձակ հող մը, որուն վրայ կան երեք շէնքեր։ Այս կալուածքը կարելի է գնել շատ նպաստառ գինով։ Սրբազան Հայրը, տեսնելով այդ կալուածքը, գտած է որ շատ նպաստակայարմար է, մանաւանդ որ Փէթըրսընի երիտասարդ տարրը այդ կողմերը քնակութիւն հաստատած է։
կարելի է նոր եկեղեցի մը շինել այդ գետինին վրայ։ Առաջնորդ Հայրը իր հաւանութիւնը տուած է այդ ուղղութեամբ Փէթըրսընի Ծխական նորհուրդին։"

Մարտ 21, 1958

"Յ.- Ընդհանուր կարծիքներ փոխանակուելի ետք, ժողովս եղբակացուց թէ Պըրկըն Բառւնդիի ծուխը պէտք է ընթացք տայ եկեղեցւոյ շինութեան, արդէն գնուած գետինին Վրայ։ իսկ Փէթըրսընի ծուխը շանայ ծախնել աէ յրլոնի մէջ գնած կալուածքը, եւ մէկ-երկու տարուան շը նով նախաճեռնարկ չըլլայ նոր եկեղեցի մը շինութեան, առաջ անպայման ատիկա ընել հարկ տեսնեն, այն ժամանակ թող գնեն գետին մը Փըսէյք Բառւնդիի յարմար վայրի մը մէջ։
Ուրիշ խօսքով, Պըրկըն Բառւնդիի մէջ պէտք է շինուի թեմին ենթակայ միայն մէկ եկեղեցի ու ատիկա շինելու է Պըրկըն Բառւնդիի ծուխը։"

Ապրիլ 18, 1958

"Ք.- Նկատի ունենալով որ, աւելի քան տարիէ մ' իվեր, Թեմական նորհուրդի հաւանութեամբ, Պըրկըն Բառւնդիի մէջ նորակազմ Հայ Առաքելական համայնքը ձեռնարկած է եկեղեցաշինութեան գործին։

Թեմական նորհուրդի իմաստուն չի համարեր արտօնել որ Առաջնորդարանիս ենթակայ ուրիշ համայնք մը նոյն շը նոյնին մէջ նախաձեռնէ եկեղեցի կամ սրահ շինելու, մինչեւ որ Պըրկըն Բառւնդիի համայնքին եկեղեցաշինական գործը իրականացման ճամբուն մէջ մտած չըլլայ։"


Մայիս 21, 1959

Թեմական նորհուրդի այս ժողովներուն մէջ, Փէթըրսընի եւ Պըրկըն Բառւնդիի ծուխերուն ներկայացուցիչները լսելէ ետք, տրուած են վերեւի որոշումները։

PARISH COUNCIL OF ST. LEON'S ARMENIAN
CHURCH OF PATERSON, N. J.

135-51 BLOOMFIELD AVENUE

ՀՈՎԱՐԱՋՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՐԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՂԵԽՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓԵՐԸԾՄԸՆԻ



ԲՈՒԺ. ԽԱՆԳԻՉԵ
Արքակի

Փետրուար 11, 1968

Գեղաշնորհ
Տ. Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի Եւ^ւ
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եռք, Ն. Ե.

Սրբազն Հայր,

Սոյ նամակով կուգանք հաղորդել Զերդ Սրբազնութեան, որ
1968-ի Տարեկան Ծխական Անդամական ժողովի Ա. Նիստին որ տեղի ու-
նեցաւ Կիրակի Յունուար 18, 1968-ին Եկեղեցւոյս Սրահին մէջ, միա-
ձայնութեամբ վաւերացուեցաւ Զեր Սրբազնութեան կողմէ փոփոխութեանց
Ենթարկուած մէր օնի Հողին վրայ շինուելիք նոր Եկեղեցւոյ բլանները:
Լիայոյս ենք որ Զերդ Սրբազնութեան օրհնութիւնն ու Թեմա-
կան Խորհուրդի բարեհաճ ու շուտափոյթ վաւերացումը կ'ստանանք, որ-
պէսզի կարենանք շինութեան գործերու աշխատանքներուն ձեռնարկել ի
պայծառութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, ի մինիթարութիւն մեր Հաւա-
տացեալ ժողովրդեան եւ ի փառ Աստուծոյ:

Մատչելով ի համբոյր Զեր Ս. Աջոյն
Դանիէլ Ք. Աղավանե
Գառնիկ քննյ. Հալլանեան

Հովհան Սրբոց Ղեղոնդեանց Եկեղեցւոյ

- Հայութիւնի հայութիւն
Դանիէլ Ք. Աղավանե - ԲՈՒԺ. ԽԱՆԳԻՉԵ
Հայութիւն - Առ Հայ:

Արքակի

Թիւ 5060
Փետրուար 25, 1963

Արժանաշնորհ
Տ. Գառնիկ ԶԱՅՐ. Հալլանեան
Հոգեւոր Հովհե Սրբոց Դեւոնդեանց Եկեղեցւոյ
Փեթքըսըն.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազն Հայրը ստացած է Փետրուար 11 թուակիր
աեր նամակը, որով կը փափառէիր ստանալ Եկեղեցւոյդ սրահի շինու-
թեան յատագիծներուն վաւերացումը:

Նորին Սրբազնութեան յանձնաբարութիւնն է որ յիշեալ յա-
տակագիծները յղէք Առաջնորդաբան որպէս զի ներկայացնէ Թեմական
նորհօւրդի Մարտ 7ի նիստին ի վաւերացումն:

Հանեցեք, եթէ կարելի է, անձամբ բերել այդ յատակագիծ-
ները:

Մամ խորին յարգանօք

Առաջնորդ Անուշէլեան
Դիւնապետ

Թիւ 6022
Մարտ 14, 1963

Արժանաշնորհ
Տ. Գառնիկ Քէնյ. Հալլանեան
Հոգեւոր Հովիւ Սրբոց Ղետնդեանց Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Ծխական Խորհուրդի
Փեթքը ըսըն.

Միրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Փետրուար 11 թուակիր Ձեր նամակը, որու կը
տեղեկացնէք թէ Յունուար 18ին գումարուած Համայնքի Տարեկան
Ծխական ժողովը միաձայնութեամբ Վասերքուցած է մեր Կողմէ Խո-
փոխութեանց ենթարկուած Ֆէրիւնի Հողին Վրայ շինուելիք նոր Ե-
կեղեցւոյ յատակագիծները, եւ կը խնդրէ սոյն որոշման վաւերա-
ցումը:

Ձեր խնդրանքը ծւ յատակագիծները ներկայացուցինք Թէմա-
կան Խորհուրդի Մարտ 7ի լիազումար նիստին, որ միաձայնութեամբ
որոշեց արտօնել Ձեզի եւ Պատուարժան Ծխական Խորհուրդին՝ ըն-
թացք տալու Ձեր նոր Եկեղեցւոյ շինութեան, Վերօյիշեալ յատա-
կագիծներուն Համաձայն:

Հաղորդելով զայս Ձեզի եւ Պատուարժան Ծխական Խորհուր-
դիդ. Կը մաղթենք Աստուծոյ օգնականութիւնը եւ օրէնութիւնները
Ձեր Եկեղեցաշինական գործերուն կատարեալ յաշողութեան Համար:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունի
Աղօթարաբ

Մոխ Արքունիկուու
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանապայի



**PARISH COUNCIL OF ST. LEON'S ARMENIAN
CHURCH OF PATERSON, N. J.**

135-51 BLOOMFIELD AVENUE

ՀՈԳԻՐԱԾՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՂԵԽՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓԵԹԸԸԸԸՆԴՆ

Տունի 21, 1963

Գերաշնորհ
Տ. Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիու Նյուք, Ն. Յ.

Սրբազն Հայր,

Եկեղեցւոյս Շինութեան Յանձնախումբը, իր երեկի նիստին մէջ որոշեց նոր Եկեղեցւոյ հիմնարկ էթի արարողութիւնն ու ճաշկերոյթը ունենալ Սեպտեմբեր 15-ին, որ է նաեւ Վերացման նաչի տօնի օր:

Վատահ ըլլալով որ որպէս մեր հոգեւոր Հայրն ու Առաջնորդը պիտի սիրէք մասնակից ըլլալ Զեր զաւակներուն ուրախութեանց, Շինութեան Յանձնախումբը կը փափաքի ունենալ Զեր նախագահ Հութիւնը այդ օրուան հանդիսութեանց համար, ու ստանալ Զեր Հայրական բաշալ երութիւնն ու օրհնութիւնը:


Յանձնախումբս կ'սպասէ Զեր բարեհաճ հաւանութեան, որպէսի շուտով կարելի ըլլայ Ճեռնարկել անմիջական անհրաժեշտ կարգաբերութեանց:

Մատչիմք ի համբոյր Զեր ս. աջոյն

Գլուխ Ք. Առաջնորդ
Դառնիկ քնյ. Հալլաճեան

Հովիւ Սրբոց Ղեղանդեանց Եկեղեցւոյ

Տիկ Ապ. 22-ի Կողմէ Յօհաննէս
Հ. - Ա. Ա. ,



**PARISH COUNCIL OF ST. LEON'S ARMENIAN
CHURCH OF PATERSON, N. J.**

135-51 BLOOMFIELD AVENUE

ՀԱԳԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԱՌԱՔԵԱԿԱԽ ՄՐԱՈՅ ՂԵԽՈՎԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓԵԹԸՐՍԼՆԻ

Տուլիս 1, 1968

**Գերաշնորհ
Տիկին Արքեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
Նիու Յորք, Ն. Յ.**

Սըբագան Հայր,

Եկեղեցնոյս Շինութեան Յանձնախումբին կողմէ երկու շաբաթներ առաջ Զեր Սըբագնութեան գրուած նամակին մէջ, նոր շինուելիք եկեղեցնոյ չիմնարկէքի եւ ձաշկերոյթի առժամեայ թուական նշանակուած էր Սեպտեմբեր 15-ը:

Նկատի ունենալով որ այդ թուականը անկարելի է այլ եւս նկատի ունենալ, քանի որ միայն Սեպտեմբեր 22-ի կիրակիին ճամփարելի եղած է ճաշարան մը գտնել, հետեւաբար ուրիշ որեւէ մէկ թուական կը դառնայ անկարելի:

Կը հաղորդենք այս փոփոխութիւնը Զերդ Սըբագնութեան առ ի գիտութիւն, վստահ ըլլալով որ կարելի պիտի ըլլայ Զեզի համար յարմար կարգադրութիւն մը ընել: Արդարեւ, այդ բացառիկ օրուան առիթով Զեր մատուցանելիք Սուրբ Պատարագը եւ Քարոզը, ինչպէս նաև Զեր նախագահութիւնը օրուան հանդիսութեանց, մեծապէս պիտի մսիթարէ եւ քաջալեէ Սըբոց Ղեիոնդեանց Եկեղեցնոյ հաւատացեալ-ները:

Կանխայայտ շնորհակալ ութեամբ,

Մատչիմ ի համբոյր Զեր ս. աշոյն

Ի դիմաց Շինութեան Յանձնախումբի
Գևորգ Քաջալից Հայոց Առաքելութիւն
 Գառնիկ քնյ. Հալլանեան

Թիւ 8001
Ցուլիս 15, 1963

Արժանաշնորհ

Տ. Գառնիկ Քէնյ. Հայլաճեան
Հոգեւոր Հովիտ Մրոց Ղետնդեանց Ծկեղեցւոյ
Փէթըրսըն.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Մըրազան Հայրը ստացած է Ձեր Ցուլիս 21 թուակիր
նամակը, որով Կը տեղեկացնէք թէ Ձեր Նոր Ծկեղեցւոյ դիմնարկեթի
արարողութիւնը յառաջիկայ Սեպտ. 15ին, և Կը փափաթիք որ Նորին
Մըրազնութիւնը նախազահէ այդ օրուան հանդիսութեանց:

Իսկ Ցուլիս մեկ թուակիր գրաւթեամբ Կը հաղորդէք թէ Սեպ-
տեմբեր 22ի կիրակիին միայն կարելի պիտի ըլլայ կատարալ Հիմնար-
կեթի արարողութիւնը ու այդ առթիւ սարքել ճաշկերոյթ մը:

Թանձնաքարուած ենք Հաղորդելու Զեզի թէ Նորին Մըրազնու-
թիւնը Զեզի վերապահած է Սեպտեմբեր 22ի կիրակիին:

Մնամ խորին յարգանօք

Առւրէն Մանուչիլ Եան
Դիւանապետ

Թունիս 10, 1974

Արժանաշնորհ

Տ. Արտէն Ա. ՔԸՆՅ. Աշմեան
Հովհիւ Ս. Ղեւոնդեանց Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
ֆերլոն, նիւ մըրզի.

Արժշ. Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարութեամբ կը հա-
ղորդենք 2եզի որ Սրբազան Հօր այցելութեան թուականը
2եր համայնքին պիտի ըլլայ Փետրուար 8-9, 1975:

Իր ժամանակին 2եզի կ'իմացնենք Սրբազան Հօր ժա-
մանման ճիշդ թուականը:

Խորին յագանօք

Նուպար Քիւփէլեան
Քարտուղար

ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՀԱՅՑ · ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՏԵՆ ԱԽԱԳ ՔՀՆՑ · ԱՇՃԱՎԱՆ, ՀԱՎԻԹ

ST. LEON'S ARMENIAN CHURCH

12-61 Saddle River Road • Fair Lawn, N. J. 07410

REV. ARTEM ASHJIAN, Pastor

Telephones: (Code 201)

791-1583 — Rectory — 791-2862

Church — 791-2862



24 Մայիս 1974

Գեղաշնորհ

Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Հայոց Ամերիկայի
Նիւ Եղբա, Ն. Ե.

Գեղաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայը,

Հաճոյքն ունիմ հրաւիրելու Զեզ հովուական այցելութիւն շնորհելու
Սրբոց Ղետոնդեանց Եկեղեցւոյ, յառաջիկայ Փետրվար 2ին կամ 9ին՝ 1975:
Առիթն է Եկեղեցւոյս անուան տօնի տարեդարձը, որ կը զուգադիպի Փետր
4ին:

Այս տարի, որքան որ գիտեմ առաջին անգամն ըլլալով ծուխիս մէջ
Եկեղեցւոյ անուան տօնը նշեցինք պատշաճ հանդիսութեամբ: Հաւանաբար
1975ի նոյն հանդիսութեան զուգադիպի Եկեղեցւոյ պարտամուրհակի բարձումը,
Նկատի առնելով որ ներկայ տարուան ընթացքին ամբողջովին պիտի վճարուի
այդ պարտքը:

Ցուսալով որ պիտի կարենաք ընդունիլ մեր հրաւերը, եւ ընտրել
թելադրուած երկու թուականներէն մին,

Մնամ, մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ
ակնածանք եւ սիրով
ծառայդ ի Քրիստոս

Ծրբեա Շ. Փառ. Աշ. Հեն

Արտէն Ա. ՔՀՆՅ. Աշճան



**Diocese of the Armenian Church
of America**

ԱՊԱԶՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԹՈՒԳՈՍ ԱՐՔԵԳԻՍԿՈՎՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ապահով

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 *

MURRAY HILL 6-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 23152
Հոկտեմբեր 11, 1971

Արժանաշնորհ
Տ. Գառնիկ Հանյ. Հալլաթեան
Հոլիւ Մբրոց Նելոնդեանց Եկեղեցւոյ
Նախագահ Ծիական Խորհուրդի
Ճերլոն, Ն. Ճ.

Միրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Մելքոնիցիքը 29 Թուակիր Շեր ճամակը: Համաձայն Հեր
ինդրանքին, Չունուար 23ի շաբաթավերջը յանկացիցած ենք Մբրոց
Նելոնդեանց Եկեղեցւոյ մեր համայնքին պրոելիք մեր այցելութեան:

Այդ առիթով, կիրակի սուսօտ պաշտամունքի ընթացրին ուրարակիր
Հարլզ Փինէ Ծիանը եւ Մարտի Սուլթաննեանը կր ծեռնադրենը Յարկաւագ,
իսկ Այլոր ծէմիրնեանին և ճաւարչ Թոռոսիանին կր շնորհնը ուրար
կիրելու արտօնութիւն: Մոյն Յեկինածուները մասան ենք որ իրենց պաշ-
տօնին պիտակից պիտի ուլան ու պիտի ջանան ուղիղ եւ շնորհալի կեր-
պով հասարել իրանց պարտականութիւնը եւ մասնակցութիւնը պաշտամունք-
ներու ընթացքին:

Կ արօթինը ու մատուծոյ շնորհը անպակաս մնայ Եկեղեցւոյ անդամ-
նեռուն լրայէն:


Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳԻԱՆ ԱՐՁԵՎԻՆԿՈՎԱՆ
Առաջնորդ

ՍՐԲՈՅ ՂԵՒՌՆԴԵԱՆՑ
ՀԱՅՑ · ԵԿԵՂԵՑԻ

REV. CARNIG HALLAJIAN, PASTOR

TEL. 791-1583



St. Leon's
Armenian Church

12-61 SADDLE RIVER RD.
FAIR LAWN, N. J.

TEL. 791-2862

Սեպտեմբեր 29, 1971

ԳԵՂԱԶՆՈՐՀ
Տ. ԹՈՂԳՈՄ ԱՐՔ. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկահայոց
Ն. Ե., Ն. Ե.

Սիրելի Սրբազան Հայր,

Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը, իր Սեպտեմբեր 22ի Նիստին, միաձայնութեամբ որոշեց դիմել Զերդ սրբազնութեան, Խնդրելու համար որ Կիրակի Յունուար 22, 1972ին այցելէիք մեր համայնք մատուցանէիք Ս. Պատարագ եւ այդ առթիւ կատարէիք նաեւ դըպիրներու ձեռնադրութիւն, ուրարի տուուչութիւն եւ սարկաւագի ձեռնադրութիւն:

Ինչպէս ծանօթ է Զեզի, ունինք երկու ուրարակիրներ Զարևս Փինէճեան եւ Սարգիս Սուլթանեան, որոնք հաւատարմօրէն ու նուիրումով կը ծառայեն Եկեղեցւոյս: Ահա այս երկու անձերն են որ կը խնդրենք սարկաւագ ձեռնադրէք: Ինչպէս նաեւ երկու այլ անձեր, Յակոբ Տէմիրճեան եւ Շաւարշ Թորոսեան որոնք եւս մեծ նուիրումով կը ծառայեն Եկեղեցւոյս եւ կսպասարկեն Ս. Սեղանին, բարեհանդիք իրենց տալ ուրարակրութեան աստիճան:

Վատահ ենք որ յանուն Եկեղեցւոյս պայծառութեան եւ յառաջդիմութեան ըլլալիք խնդրանքները մեր կողմէն, պիտի ընդունուին Զեր Սրբազնութեան կողմէ եւ այդ օր Զեզ կունենանք մեր մէջ: Այդ օր, յաւարտ արարողութեանց պիտի ունենանք Ճաշկերոյթի պատիւ ձեռնադրեալներուն, Եկեղեցւոյս սրահին մէջ:

Մաղթելով Զեր գործերուն յաջողութիւն,

Մատչիմ ի համբոյր Զեր Ս. Աջոյն
James G. Hayren
Գառնիկ Քանյ. Հալլայան



181 A
276 C

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մայիս 81, 1977

Կրթականուր:

Տ. Բարի Ահնյ. Մէթօնան
Հովհան Ա. Խելոնդիանը Ակտոցը
Խախտան Օքական Թորութեալը
Քերլոն.

Սիրեւի Ֆեք Բարի,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուքճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տար-
ւան Օգոստոսին: Եռւրջ քառասունը հինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղե-
ցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրագոր-
ծումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային
Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ եռոք քաղաքի սրտին
Վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուքճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ
աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ
բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու
իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ծգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն
ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուքճեանի անձն ու ոգին յարատեւ
վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան,
յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

Տիար Տառուր Տառուրեան

Առենապետ

Տիար Սուրէն Փէսմեան

Գանձապահ

Տիար Ծղուարդ Պաշեան

Բ. Գանձապահ

Տ. Գառնիկ Քնյ. Հալլամեան

Քարտուղար

Տ. Առնակ Քնյ. Գասպարեան

Բ. Քարտուղար

Տիար Ռիշըրտ Գ. Կրէկըրի

Օրինական Խորհրդատու

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուքճեանի ոգեկոչման կար-
գացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մին-
չեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուքճեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տոլար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տոլար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տոլար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տոլար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնընկատի ունենալով կը յանձնարարենք.

1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուքճեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները հանեցէք մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգստէն յետոյ մատաղի նաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով քացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ հանեցէք գտնել 60 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տոլար նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեղրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոշումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով նանչցըւած Հայկ Գավուքճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ

Բորժոյ Ալեքսանդրի
ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
Առաջնորդ